ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա.Վեհափառի փողոց, հեռ. (0222) 65203, էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 նոյեմբերի 2018 թ. N 411-Ա

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՔՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 104-րդ հոդվածի 5-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2018 թվականի նոյեմբերի 2-ի N 88-Ա որոշմամբ հաստատված ժամանակացույցի 19-րդ կետի՝ որոշում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2018 թվականի դեկտեմբերի 9-ին կայանալիք արտահերթ ընտրությունների անցկացման համար Բյուրեղավան համայնքում սահմանել 6 (վեց) տեղամասային կենտրոններ՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնարարել Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանին սահմանված ժամկետում տեղամասային կենտրոնների մասին տեղեկացնել լիազոր մարմնին, համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2018թ. նոյեմբերի 05
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա.Վեհափառի փողոց, հեռ. (0222) 65203, էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 նոյեմբերի 2018 թ. N 412-Ա

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք>> սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2018 թվականի նոյեմբերի 2-ի N 88-Ա որոշմամբ հաստատված ժամանակացույցի 10-րդ կետի՝ որոշում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2018 թվականի դեկտեմբերի 9-ին կայանալիք արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում Բյուրեղավան համայնքի տարածքում քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

1)քաղաք Բյուրեղավան, Կոտայքի փողոց, 28 շենքի ճակատային մաս՝ 20 (քսան) քառակուսի մետր.

2)քաղաք Բյուրեղավան, Զորավար Անդրանկի փողոց, 42 շենքի ճակատային մաս՝ 20 (քսան) քառակուսի մետր.

3)քաղաք Բյուրեղավան, Սամվել Վարդանյանի փողոց, 36 շենքի ճակատային մաս՝ 20 (քսան) քառակուսի մետր.

4)քաղաք Բյուրեղավան, Վազգեն Սարգսյանի փողոց, 20 շենքի ճակատային մաս՝ 20 (քսան) քառակուսի մետր.

5)գյուղ Նուռնուս, Գլխավոր փողոց թիվ 13 շինության ճակատային մաս՝ 20 (քսան) քառակուսի մետր.

6)գյուղ Նուռնուս, Գլխավոր փողոց թիվ 27 շինության կողային հատված ՝ 6 (վեց) քառակուսի մետր.

7)գյուղ Զրաբեր, 1-ին փողոց, հուշարձանի կողքի քարե կառույցի վրա՝ 2 (երկու) քառակուսի մետր.

8)գյուղ Զրաբեր, 1-ին փողոց 32 տան ճակատային մաս՝ 2 (երկու) քառակուսի մետր:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2018թ. նոյեմբերի 05
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա.Վեհափառի փողոց, հեռ. (0222) 65203, էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 նոյեմբերի 2018 թ. N 413-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ 15 ՇԵՆՔԻ ԹԻՎ 32 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի ու հիմք ընդունելով Եկատերինա Խալաթյանի դիմումը՝ որոշում եմ.

1.Եկատերինա Խալաթյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Բյուրեղավան քաղաքի 15 շենքի թիվ 32 բնակարանի (վկայական՝ N 2306817 տրված 2006 թվականի նոյեմբերի 23-ին) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վազգեն Սարգսյանի փողոց 15 շենք 32 բնակարան:

2.Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2018թ. նոյեմբերի 06
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա.Վեհափառի փողոց, հեռ. (0222) 65203, էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 նոյեմբերի 2018 թ. N 414-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 48-րդ և 49-րդ կետերի ու հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 27-ի N 22-Ն որոշումը և Քրիստինե Ռշտունու դիմումը՝ որոշում եմ.

1.Կոտայքի մարզի Նուռնուսի այգետարածք 20 թաղամասի թիվ 9ա անշարժ գույքին տրամադրել հասցե:

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Կոտայք թաղամաս 1-ին փողոց 9/1:

2.Քրիստինե Ռշտունուն՝ համայնքապետարանի 900105224068 հաշվեհամարին վճարել 5000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման համար ծառայության վճար:

3.Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ հասցեի գրանցում կատարելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2018թ. նոյեմբերի 06
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա.Վեհափառի փողոց, հեռ. (0222) 65203, էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 նոյեմբերի 2018 թ. N 415-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 48-րդ և 49-րդ կետերի ու հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 27-ի N 22-Ն որոշումը և Պարույր Հովհաննիսյանի դիմումը՝ որոշում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս հասցեում գտնվող 07-051-0015-0053 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել հասցե:

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Գլխավոր փողոց 37:

2.Պարույր Հովհաննիսյանին՝ համայնքապետարանի 900105224068 հաշվեհամարին վճարել 5000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման համար ծառայության վճար:

3.Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ հասցեի գրանցում կատարելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2018թ. նոյեմբերի 06
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա.Վեհափառի փողոց, հեռ. (0222) 65203, էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 նոյեմբերի 2018 թ. N 416-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ 36 ՇԵՆՔԻ ԹԻՎ 27 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի ու հիմք ընդունելով Կարինե Ավագյանի դիմումը՝ որոշում եմ.

1.Կարինե Ավագյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Բյուրեղավան քաղաքի 36 շենքի թիվ 27 բնակարանի (վկայական՝ N2822080 տրված 2011թվականի սեպտեմբերի 16-ին) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Սամվել Վարդանյանի փողոց 36 շենք 27 բնակարան:

2.Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2018թ. նոյեմբերի 06
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա.Վեհափառի փողոց, հեռ. (0222) 65203, էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 նոյեմբերի 2018 թ. N 417-Ա

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿՈՏԱՅՔԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 20/41 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-11-րդ և 13-րդ կետերի, հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և հիմք ընդունելով «ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված տեխնիկական եզրակացությունն ու Գրիգոր Ազարյանի դիմումը՝ որոշում եմ.

1.Գրիգոր Մակիչի Ազարյանին (ծնված 1948 թվականի հունիսի 16-ին) սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Կոտայքի փողոց թիվ 20/41 հասցեի (վկայական N 2500898, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0037-0068) 0.01 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված բնակելի նպատակային նշանակությամբ 126.46 քմ ներքին (159.27 քմ արտաքին) մակերեսով բնակելի տունը ճանաչել օրինական:

2.Գրիգոր Մակիչի Ազարյանին՝ համայնքապետարանի 900105202213 հաշվեհամարին վճարել 334467 (երեք հարյուր երեսունչորս հազար չորս հարյուր վաթսունյոթ) դրամ, սույն որոշման 1-ին

կետում նշված 159.27 քմ արտաքին (126.46 քմ ներքին) մակերեսով բնակելի տան օրինականացման վճար:

3.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում Բյուրեղավանի համայնքապետարանի համապատասխան հաշվեհամարին չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Հաստատել՝ որոշման անբաժանելի մասը կազմող «Երիցուկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից կազմված ընդհանուր 0.01 հեկտար մակերեսով հողամասի և բնակելի տան հատակագիծը:

5.Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2018թ. նոյեմբերի 08
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա.Վեհափառի փողոց, հեռ. (0222) 65203, էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 նոյեմբերի 2018 թ. N 418-Ա

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՊԱՏՇԳԱՄԲԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 23-րդ հոդվածի և հիմք ընդունելով Հարություն Հարությունյանի դիմումը՝ որոշում եմ.

1.Թույլատրել Հարություն Հարությունյանին կատարելու իրեն ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի 3 շենքի 17 բնակարանի (վկայական՝ N 24102018-07-0049, տրված 2018 թվականի հոկտեմբերի 24-ին) պատշգամբի ընթացիկ նորոգում թեթև կոնստրուկցիաներով՝ առանց նախագծային փաստաթղթերի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2018թ. նոյեմբերի 08
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա.Վեհափառի փողոց, հեռ. (0222) 65203, էլ.փոստ
byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 նոյեմբերի 2018 թ. N 419-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՅԳԵՏՆԱԿԸ, ԾԱԾԿՆ ՈՒ ՊԱՐԻՍՊԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ, ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-12-րդ և 22.1-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի, հաշվի առնելով, որ այգետնակը, ծածկն ու պարիսպը կառուցված են մինչև 2001թվականի մայիսի 15-ը, կառուցված չեն և չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ, փաստացի ավել օգտագործվող 0.00516 հեկտար մակերեսով հողամասը համայնքի հողերի օգտագործման սխեմայով նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, նշված հողամասի օգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը և հիմք ընդունելով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2018թվականի հոկտեմբերի 15-ին տրված N Հ-18796 արխիվային տեղեկանքը, «ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված տեխնիկական եզրակացությունն ու Էդիգար Անդրանիկի Սմբաթյանի դիմումը՝ որոշում եմ.

1.Աբովյանի շրջանի Նուռնուս այգետարածքի թիվ 1 հասցեում գտնվող անշարժ գույքը վերահասցեավորել.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Շինարար թաղամաս 1 փողոց 1 :

2.Ճանաչել Էդիգար Անդրանիկի Սմբաթյանի (ծնված՝ 1946 թվականի դեկտեմբերի 12-ին) սեփականության իրավունքը իրեն պատկանող 0.05 հեկտար մակերեսով (ծածկագիր՝ 07-051-0156-0043) հողամասից ավել օգտագործվող 0.00516 հեկտար մակերեսով հողամասի նկատմամբ:

3.Էդիգար Անդրանիկի Սմբաթյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Շինարար թաղամաս 1 փողոց 1 հասցեի 0.05516 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման հողամասում 2001թվականի մայիսի 15-ից առաջ ինքնակամ կառուցված բնակելի նպատակային նշանակության 225.5 քմ արտաքին (190.7 քմ ներքին) մակերեսով այգետնակը, 6.1 քմ արտաքին (5.8 քմ ներքին) մակերեսով ծածկը և 3.3 քմ մակերեսով պարիսպը ճանաչել օրինական:

4.Սույն որոշման 2-րդ կետում նշված ընդհանուր 0.05516 հեկտար մակերեսով հողամասը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, ինչպես նաև չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք:

5.Հաստատել՝ որոշման անբաժանելի մասը կազմող «ԳԻՍ-ԱՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից կազմված ընդհանուր 0.05516 հեկտար մակերեսով նշված հողամասի ու շինությունների հատակագծերը:

6.Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար :

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2018թ. նոյեմբերի 08
ք. Բյուրեղավան

Հավելված
Բյուրեղավան համայնքի ղեկավարի
2018 թվականի նոյեմբերի 05 -ի N 411 – Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ

Հ/Հ	Տեղամասային կենտրոնի գտնվելու վայրը	Հասցեն
1.	«Բյուրեղավանի Ս. Վարդանյանի անվան ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	քաղաք Բյուրեղավան, Կոտայքի փողոց 63
2.	Մշակույթի տուն	քաղաք Բյուրեղավան, Զորավար Անդրանիկի փողոց
3.	«Բյուրեղավանի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	քաղաք Բյուրեղավան, Սամվել. Վարդանյանի փողոց 2
4.	«Բյուրեղավանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն	քաղաք Բյուրեղավան, Սամվել Վարդանյանի փողոց 47/55
5.	«Նուռնուսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	Գյուղ Նուռնուս, Գլխավոր փողոց 9
6.	«Զրաբերի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	Գյուղ Զրաբեր, 1-ին փողոց շենք 24

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ